

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ)
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Լիտվայի Հանրապետությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով ապահովել «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կիրարկումը,

Համաձայնագրի 20-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,
համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Իրավասու մարմինները

1. Համաձայնագրի 20(1)(ա) հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի կիրարկման համար պատասխանատվություն են կրում Պայմանավորվող կողմերի հետևյալ իրավասու մարմինները.

Հայաստանի Հանրապետությունում՝

հետընդունման և տարանցման դիմումների ընդունման, ներկայացման և դրանց ընթացք տալու համար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը.

Կարապետ Ուլնեցու փ. 31/3, 0037, Երևան

Հեռ.՝ +37460 275 009, +37460 275 017

Ֆաքս՝ +37460 275 033

Էլ. հասցե՝ readmission@mta.gov.am

Լիտվայի Հանրապետությունում՝

a) հետընդունման դիմումների ընդունման, ներկայացման և դրանց ընթացք տալու համար՝

Լիտվայի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիոն

վարչությունը.

Լ. Սապիեգոս փ. 1, LT-10312, Վիլնյուս

Հեռ.՝ +370 5 271 7112

Էլ. հասցե՝ info@migracija.gov.lt

b) տարանցման դիմումների ընդունման, ներկայացման և դրանց ընթացք տալու համար՝

Լիտվայի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական սահմանային հսկողության ծառայությունը.

Սավոներիու պ. 2, LT-03116, Վիլնյուս

Հեռ.՝ +370 5 271 9305

Ֆաքս՝ +370 5 271 9306

Էլ. հասցե՝ dvks@vsat.vrm.lt

2. Սույն հոդվածի (1) կետում նշված Պայմանավորվող կողմերի իրավասու մարմիններն դիվանագիտական ուղիներով միմյանց անմիջապես տեղեկացնում են իրավասու մարմինների ցանկում կատարված ցանկացած փոփոխության կամ վերոնշյալ մարմինների հետ կապ պահպանելու համար անհրաժեշտ տեղեկությունների փոփոխության մասին:

Հոդված 2

Պետական սահմանային անցակետերը

1. Պայմանավորվող կողմերի քաղաքացիների և երրորդ երկրների քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ հետընդունման ենթակա անձինք) հետընդունումը և տարանցման նպատակով ընդունումը կատարվում են Պայմանավորվող կողմերի պետական սահմանային հետևյալ անցակետերում.

Հայաստանի Հանրապետությունում՝

«Զվարթնոց» միջազգային օդանավակայան

0042, Երևան

Հեռ.՝ +374 10 493 000

Ֆաքս՝ +374 10 493 000

Էլ. հասցե՝ contacts@aia-zvartnots.aero

Լիտվայի Հանրապետությունում՝

«Լիտվական օդանավակայաններ» պետական ձեռնարկության Վիլնյուսի մասնաճյուղ

Ռոդունիուս կելիաս 2, LT02189, Վիլնյուս, Լիտվա

Հեռ.՝ +370 5 219 84 85, +370 655 00176

Էլ. հասցե՝ vsat.vou.ob@vsat.vrm.lt

«Լիտվական օդանավակայաններ» պետական ձեռնարկության Կաունասի մասնաճյուղ

Օրո ուոստո փ. 4, Կարմելևա, LT-54460, Կաունաս թաղամաս, Լիտվա

Հեռ.՝ +370 37 399 319

Էլ. հասցե՝ kauno.budetojas@vsat.vrm.lt

«Լիտվական օդանավակայաններ» պետական ձեռնարկության Պալանգայի մասնաճյուղ

Լիեպոջոս պլենտաս 1, LT-00169, Պալանգա, Լիտվա

Հեռ.՝ +370 46 053 688

Էլ. հասցե՝ ws72105@vsat.vrm.lt

2. Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները դիվանագիտական ուղիներով միմյանց անմիջապես տեղեկացնում են սույն հոդվածի (1) կետով նախատեսված սահմանային անցակետերի ցանկում կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 3

Հաղորդակցության միջոցները

1. Հետընդունման և տարանցման դիմումներն ուղարկվում են Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (այսուհետև՝ ՌՀԿԷՀ) միջոցով:

2. Հետընդունման և տարանցման դիմումների պատասխանները և այլ կից հաղորդագրություններն ուղարկվում են ՌՀԿԷՀ-ի միջոցով:

3. Անհրաժեշտության դեպքում հետընդունման ու տարանցման դիմումները և դրանց պատասխանները կարող են ուղարկվել նաև էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով (փոստ, ֆաքս կամ պաշտպանված էլեկտրոնային նամակ):

Հոդված 4

Հետընդունման դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերը

1. Համաձայնագրին որպես 5-րդ հավելված կցված հետընդունման դիմումի ստանդարտ ձևը (այսուհետև՝ հետընդունման դիմում) լրացվում է Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն և ուղարկվում հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով՝ սույն հոդվածի (2) կետում նշված լրացուցիչ փաստաթղթերի հետ միասին: Այն դեպքում, երբ հետընդունման դիմումի մեջ, սույն Արձանագրության 4(1) հոդվածին համապատասխան, նշվում է հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույց անցկացնելու անհրաժեշտության մասին, այն միաժամանակ ուղարկվում է Հայցվող

պետության դիվանագիտական ներկայացուցչություն:

2. Հետընդունման դիմումից բացի՝ եթե հնարավոր է, յուրաքանչյուր դեպքում հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին ներկայացնում է Համաձայնագրի 1-4-րդ հավելվածներում նշված փաստաթղթերը, «Մատնահետքերի եվրոպական ստանդարտի» լրացված ստանդարտ ձևը՝ այն անձի մատնահետքերով և լուսանկարով (ոչ լուսապատճենված կամ այլ կերպ պատճենված լուսանկարը), որին վերաբերում է հետընդունման դիմումը: Եթե ենթակա են ներկայացման Համաձայնագրի 2-4-րդ հավելվածներով նախատեսված ապացույցներ, ապա դրանք պետք է լինեն հստակ և ճշգրիտ՝ դրանց ստուգումը հնարավոր դարձնելու համար, ինչը կհանգեցնի սահմանմանելուն, թե արդյոք առկա՞ է հայցվող Պայմանավորվող կողմի հետընդունման պարտավորություն:

Հոդված 5 Հարցազրույցները

1. Եթե հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը, հետընդունման դիմումից բացի, չի կարող ներկայացնել Համաձայնագրի 1-2-րդ հավելվածներում նշված որևէ փաստաթուղթ, կամ եթե ներկայացված փաստաթղթերը բավարար չեն, և եթե հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցի անհրաժեշտությունը նշված է հետընդունման դիմումի մեջ, հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը, որն ուսումնասիրում է հետընդունման դիմումը, կազմակերպում է հետընդունման ենթակա անձի հարցազրույցը՝ համաձայն սույն հոդվածում նախատեսված ընթացակարգի:

2. Հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցն անցկացվում է՝

Հայաստանի Հանրապետության անունից՝

Լիտվայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության
դիվանագիտական ներկայացուցչության պաշտոնյաների կողմից,

Լիտվայի Հանրապետության անունից՝

Հայաստանի Հանրապետությունում Լիտվայի Հանրապետության
դիվանագիտական ներկայացուցչության պաշտոնյաների կողմից:

3. Հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցը պետք է կազմակերպվի հարցազրույց անցկացնելու խնդրանք պարունակող հետընդունման դիմումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Հայցող Պայմանավորվող կողմն ապահովում է հետընդունման ենթակա անձի տեղափոխումը հայցվող Պայմանավորվող կողմի դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ: Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ հարցազրույցը կարող է անցկացվել դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի շենքից դուրս, և այս դեպքում հարցազրույցի անցկացման ծախսերը (տրանսպորտային)

կրում է հայցող Պայմանավորվող կողմը: Հետընդունման դիմումի պատասխանը, որը ներառում է հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցի արդյունքները, ներկայացվում է հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին հնարավորինս արագ, բայց ոչ ուշ, քան Համաձայնագրի 11(2) հոդվածով նախատեսված ժամկետում:

4. Սույն հոդվածի (3) կետով նախատեսված՝ հետընդունման դիմումին պատասխանելու ժամկետը հաշվարկվում է հետընդունման դիմումը հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի ստանալու օրվանից:

5. Եթե հետընդունման ենթակա անձը չի ներկայանում հարցազրույցի նշված ժամին, և հայցվող Պայմանավորվող կողմը հայցող Պայմանավորվող կողմից չի ստանում որևէ տեղեկություն հետընդունման ենթակա անձի հարցազրույցի ժամը փոփոխելու խնդրանքի վերաբերյալ, և եթե առկա չեն հետընդունման գործընթացին ընթացք տալու համար անհրաժեշտ այլ ապացույցներ, հայցվող Պայմանավորվող կողմը ներկայացնում է հետընդունման դիմումի գրավոր բացասական պատասխան: Նման դեպքերում հայցող Պայմանավորվող կողմը, որը ցանկանում է հետ ընդունել նույն անձին, պետք է վերստին հետընդունման դիմում ներկայացնի հայցվող Պայմանավորվող կողմին:

Հոդված 6

Հետընդունման ենթակա անձի փոխադրման ժամանակ ներկայացվող փաստաթղթերը

1. Հայցվող Պայմանավորվող կողմի կողմից հետընդունման դիմումը հաստատվելուց հետո հայցող Պայմանավորվող կողմը գրավոր ծանուցում է ուղարկում հայցվող Պայմանավորվող կողմին, որը ներառում է հետընդունման ենթակա անձի մասին մանրամասներ և տեղեկություններ տվյալ անձի փոխադրման վերաբերյալ. ծանուցմանը կցվում է հետընդունման ենթակա անձին ընդունելու վերաբերյալ հայցվող Պայմանավորվող կողմի համաձայնության պատճենը:

2. Սույն հոդվածի (1) կետում նշված ծանուցումը ներկայացվում է սույն Արձանագրությանը որպես 1-ին հավելված կցված փոխադրման ձևը (այսուհետ՝ փոխադրման ձև) լրացնելու միջոցով: Փոխադրման ձևն ուղարկվում է հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին ՌՀԿԷԿ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով՝ ոչ ուշ, քան հետընդունման ենթակա անձի փոխադրման օրվանից 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

3. Հետընդունման ենթակա անձի փոխադրման ամսաթիվը (այսուհետ՝ փոխադրման ամսաթիվ) հայցող Պայմանավորվող կողմի կողմից իրավական կամ գործնական խոչընդոտների պատճառով հետաձգվելու դեպքում հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնինը հետաձգման մասին անմիջապես տեղեկացնում է հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին, որին ներկայացված է հետընդունման

դիմումը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հետաձգման դեպքում հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը թարմացնում է փոխադրման ձևը՝ սույն հոդվածի (2) կետի դրույթներին համապատասխան:

5. Հայցվող Պայմանավորվող կողմի իրավական կամ գործնական խոչընդոտների պատճառով փոխադրման ամսաթվի հետաձգման դեպքում հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը հետաձգման մասին անմիջապես տեղեկացնում է հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին և առաջարկում փոխադրման նոր ամսաթիվ:

Հոդված 7 **Տարանցման դիմումը**

1. Ի լրումն Համաձայնագրի 15(1) հոդվածի դրույթների՝ անհրաժեշտության դեպքում տարանցման դիմումը պետք է ներառի հետևյալը.

- a) տեղեկություններ տարանցման ենթակա անձի հիվանդությամբ կամ տարիքով պայմանավորված՝ բժշկական կամ տարեց անձի խնամքի հատուկ կարիքների վերաբերյալ,
- b) տեղեկություններ տարանցման ենթակա անձի և (կամ) նրան ուղեկցող անձնակազմի անվտանգության ապահովման կամ պաշտպանության միջոցների հնարավոր անհրաժեշտության վերաբերյալ:

2. Սույն հոդվածի (1) կետում նշված տեղեկությունները լրացվում են Համաձայնագրի 6-րդ հավելվածում ներկայացված տարանցման միասնական դիմումի ձևի (այսուհետ՝ տարանցման դիմումի ձև) «Գ» (նկատառումներ) բաժնում:

3. Համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն՝

- 1) տարանցման դիմումը պետք է ուղարկվի հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով՝ ոչ ուշ, քան նախատեսված տարանցումից 15 (տասնհինգ) օր առաջ.
- 2) հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը պատասխանում է տարանցման դիմումին ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով Համաձայնագրի 15(2) հոդվածում նշված ժամկետում: Հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը նաև նշում է, թե արդյո՞ք համաձայն է տարանցմանը, ամսաթվին, հայցվող Պայմանավորվող կողմի՝ նշանակված պետական սահմանային անցակետին, փոխադրման եղանակին և ուղեկցող խմբի անդամներին.
- 3) եթե հայցող Պայմանավորվող կողմը հայցվող Պայմանավորվող կողմի

օժանդակությունը համարում է անհրաժեշտ քայլ, դա պետք է նշված լինի տարանցման դիմումի ձևի մեջ: Հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինն այնուհետև հաստատում է, թե արդյո՞ք կարող է տրամադրել հայցող Պայմանավորվող կողմի կողմից հայցվող օժանդակությունը:

- 4) օդով ուղեկցմամբ փոխադրման դեպքում հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը հնարավորինս ապահովում է անվտանգություն և տրամադրում օժանդակություն տարանցման ենթակա անձի օդանավ բարձրանալու հարցում: Նման դեպքում հայցող Պայմանավորվող կողմի ուղեկցող անձնակազմը նույնպես պետք է ներկա լինի:

4. Հայցող Պայմանավորվող կողմը, առանց ձգձգման, հետ է ընդունում իր տարածք տարանցման ենթակա անձին, ինչպես նշված է Համաձայնագրի 14(4) հոդվածում, եթե՝

- 1) տարանցման հաստատումը մերժվել է կամ չեղյալ է համարվել, ինչպես նշված է Համաձայնագրի 14(3) հոդվածում, կամ
- 2) տարանցման ենթակա անձն անօրինական կերպով է մուտք գործել հայցվող Պայմանավորվող կողմի տարածք, կամ
- 3) տարանցման կամ հետընդունման հաստատումը մերժվել է տարանցման այլ երկրի կամ վերջնական նպատակակետ հանդիսացող երկրի կողմից, կամ
- 4) տարանցումը չի կարող հաստատվել այլ հանգամանքների պատճառով:

Հոդված 8

Ուղեկցմամբ հետընդունումը և տարանցումը

Համաձայնագրի 20(1)(բ) հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող կողմերը համաձայնում են իրենց տարածքներով հետընդունման ենթակա անձի ուղեկցմամբ փոխադրման կամ տարանցման հետ կապված հետևյալ դրույթների շուրջ.

- 1) ուղեկցող անձնակազմը պատասխանատու է հետընդունման ենթակա անձանց ուղեկցելու և նրանց նպատակակետ հանդիսացող երկրի իրավասու մարմինների ներկայացուցիչներին փոխանցելու համար,
- 2) ուղեկցող անձնակազմն իր պարտականությունները կատարում է անզեն և քաղաքացիական հագուստով: Ուղեկցող անձնակազմը պետք է ունենա հայցվող Պայմանավորվող կողմի կողմից հետընդունման կամ տարանցման հաստատումը հավաստող փաստաթղթեր: Նրանք նաև ունենում են իրենց անձը հաստատող պաշտոնական փաստաթղթեր,
- 3) հայցվող Պայմանավորվող կողմը տրամադրում է ուղեկցում և աջակցություն նման առաջադրանքներ կատարելու համար իրավասու իր անձնակազմի ներգրավման միջոցով,
- 4) ուղեկցումը կազմակերպվում է հայցվող Պայմանավորվող կողմի գործող օրենսդրության համապատասխան: Ուղեկցման կամ տարանցման գործողությունների ընթացքում անձնակազմի իրավասությունը սահմանափակված

է ինքնապաշտպանությամբ: Հայցող Պայմանավորվող կողմի ուղեկցող անձնակազմին հայցվող Պայմանավորվող կողմի կողմից համապատասխան աջակցության տրամադրման անհնարինության դեպքում կամ ակնհայտ վտանգավոր իրավիճակներում օժանդակող անձնակազմին աջակցելու անհրաժեշտության դեպքում ուղեկցող անձնակազմն իրավասու է գործել ողջամիտ և համաչափ կերպով՝ կանխելու համար հետընդունման կամ տարանցման սուբյեկտ հանդիսացող անձի փախուստը, այդ անձի կողմից իրեն կամ ցանկացած այլ անձի վնասելը կամ գույքային վնաս հասցնելը,

- 5) ուղեկցող անձնակազմը պատասխանատու է հետընդունման կամ տարանցման սուբյեկտ հանդիսացող անձին վերաբերող ճամփորդական փաստաթղթերը և ցանկացած այլ փաստաթուղթ պահելու, ինչպես նաև դրանք նպատակակետ հանդիսացող երկրի իրավասու մարմնի ներկայացուցչին հանձնելու համար,
- 6) ուղեկցող անձնակազմին չի թույլատրվում լքել փոխադրման վայրը նախքան հետընդունման կամ տարանցման սուբյեկտ հանդիսացող անձի հանձնումը,
- 7) հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմինն անհրաժեշտության դեպքում իր ուղեկցող անձնակազմին տրամադրում է վավեր մուտքի արտոնագրեր տարանցման բոլոր երկրների կամ նպատակակետ հանդիսացող երկրի համար:

Հոդված 9 Ծախսերի ծածկումը

Հետընդունման կամ տարանցման գործողությունների հետ կապված՝ հայցվող Պայմանավորվող կողմի կատարած ծախսերը, որոնք, Համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն, կրում է հայցող Պայմանավորվող կողմը, փոխհատուցվում են հայցող Պայմանավորվող կողմի կողմից՝ եվրոյով, հաշիվ-ապրանքագիրը ստանալու ամսաթվից 30 օրվա ընթացքում:

Հոդված 10 Փորձագետների խորհրդակցությունները

Պայմանավորվող կողմերը համաձայնում են ձևավորել փորձագետների երկկողմ հանձնաժողով: Սույն Արձանագրության 1-ին հոդվածում նշված Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները նշանակում են հանձնաժողովի անդամներին և այդ մասին տեղեկացնում մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմիններին: Սույն Արձանագրության կիրարկման հետ կապված խորհրդակցությունները կազմակերպվում են ըստ անհրաժեշտության:

Հոդված 11 Հաղորդակցման լեզուն

Համաձայնագրի և սույն Արձանագրության ընթացակարգերի կատարման շրջանակներում Պայմանավորվող կողմերի միջև տեղի ունեցող հաղորդակցման և համագործակցության լեզուն անգլերենն է:

Հոդված 12 Առնչությունը մյուս համաձայնագրերին

Սույն Արձանագրությունը չի ազդում Պայմանավորվող կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վրա:

Հոդված 13 Վեճերի կարգավորումը

Վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են ծագել սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման կամ կիրառման ժամանակ, կարգավորվում են բանակցությունների և (կամ) խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 14 Արձանագրության ուժի մեջ մտնելը, գործողությունը և գործողության դադարեցումը

1. Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտի մասին: Պայմանավորվող կողմը վերջին ծանուցումը ստանալուց հետո այդ մասին դիվանագիտական ուղիներով ծանուցում է Համաձայնագրի 19-րդ հոդվածում նշված հետընդունման հարցերով համատեղ կոմիտեին: Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի ստանալու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:

2. Համաձայնագիրն ուժը կորցնելու դեպքում սույն Արձանագրությունը նույնպես ուժը կորցնում է:

3. Պայմանավորվող կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են փոփոխել սույն Արձանագրության դրույթները: Այդ փոփոխությունները կատարվում են առանձին արձանագրությունների միջոցով, որոնք կազմում են սույն Արձանագրության անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն հոդվածի (1) կետում նշված ընթացակարգի համաձայն:


4. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Արձանագրության գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին

գրավոր ծանուցում ուղարկելով մյուս Պայմանավորվող կողմին: Այդ դադարեցումն ուժի մեջ է մտնում դադարեցման մասին ծանուցումը ստանալու օրվանից հետո՝ 3 (երեք) ամիս ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

5. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցնում է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լիտվայի Հանրապետության Կառավարության միջև առանց թույլտվության ապրող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2003 թվականի սեպտեմբերի 15-ին Երևանում ստորագրված համաձայնագիրը:

Կատարված է 27 հոկտեմբեր 2021թ. հունիսի 15-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, լիտվերեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Արձանագրության կիրարկման հետ կապված տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



Հավելված I

**Հայաստանի Հանրապետության և
Լիտվայի Հանրապետության միջև՝
«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև
առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման
(ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի
կիրարկման մասին արձանագրության**

Ազգային գինանշանը

Հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի անվանումը
(վայրը և ամսաթիվը)

Հղում հմ.

Ո՞ւմ

.....

(Հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի անվանումը)

ՓՈԽԱԴՐՄԱՆ ՁԵՎ

Համաձայն Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև՝
«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության
բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման
մասին արձանագրության 5-րդ և 6-րդ հոդվածների

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՁԻ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Լրիվ անունը (ազգանունը ընդգծել)
.....
2. Ծննդյան ամսաթիվը
.....
3. Ճամփորդական փաստաթուղթը (նշել տեսակը)
.....

հմ. վավեր է՝ սկսած մինչև (տարի)

4. Տեղափոխման եղանակը (օդով)
.....
5. Ամսաթիվը
.....
6. Ժամը
.....

7. Փոխադրման վայրը (սահմանային անցակետ)

.....

8. Հետընդունման ենթակա անձի առողջական վիճակը

.....

9. Ուղեկցմամբ փոխադրում..... ԱյոՈչ
Եթե այո, ապա նշել ուղեկցող անձնակազմի վերաբերյալ մանրամասներ

.....

10. Փոխադրման վայրում ձեռնարկվելիք անվտանգության միջոցները

.....

.....

(Հայցող Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի ստորագրությունը)

(Կնիք/դրոշմակնիք)

Հավելված II

**Հայաստանի Հանրապետության և
Լիտվայի Հանրապետության միջև՝
«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև
առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման
(ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի
կիրարկման մասին արձանագրության**

**Հայաստանի Հանրապետության ոչ աշխատանքային ազգային տոները և
հիշատակի օրերը
(«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին»
օրենքի համաձայն)**

1. Ազգային տոներ և հիշատակի օրեր՝
- a) Դեկտեմբերի 31 - հունվարի 6՝ Ամանոր և Ծննդյան տոներ
 - b) Հունվարի 7՝ Սուրբ Ծննդյան և Հայտնության տոնին հաջորդող՝
Մեռելոց հիշատակի օր
 - c) Հունվարի 28՝ Բանակի օր
 - d) Մարտի 8՝ Կանանց տոն
 - e) Ապրիլի 24՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր
 - f) Մայիսի 1՝ Աշխատանքի օր
 - g) Մայիսի 9՝ Հաղթանակի և խաղաղության տոն
 - h) Մայիսի 28՝ Հանրապետության տոն
 - i) Հուլիսի 5՝ Սահմանադրության օր
 - j) Սեպտեմբերի 21՝ Անկախության տոն

**Լիտվայի Հանրապետության ազգային տոները
(Լիտվայի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն)**

2. Ազգային տոներ՝
- a) Հունվարի 1՝ Ամանոր
 - b) Փետրվարի 16՝ Անկախության օր
 - c) Մարտի 11՝ Անկախության վերականգնման օր
 - d) Քրիստոնեական Զատիկի (արևմտյան ավանդույթների համաձայն)
կիրակին և դրան հաջորդող երկուշաբթին
 - e) Մայիսի 1՝ Աշխատանքի միջազգային օր
 - f) Մայիսի առաջին կիրակի՝ Մայրության օր
 - g) Հունիսի առաջին կիրակի՝ Հայրության օր
 - h) Հունիսի 24՝ Սուրբ Հովհաննեսի օր
 - i) Հուլիսի 6՝ Լիտվայի թագավոր Մինդաուգասի թագադրության ազգային օր
 - j) Օգոստոսի 15՝ Աստվածածնի վերափոխման տոն

- k) Նոյեմբերի 1՝ Բոլոր սրբերի օր
- l) Նոյեմբերի 2՝ Բոլոր հոգիների օր
- m) Դեկտեմբերի 24՝ Սուրբ Ծննդյան նախօրե
- n) Դեկտեմբերի 25-26՝ Սուրբ Ծնունդ

**PROTOCOL
BETWEEN
THE REPUBLIC OF ARMENIA
AND
THE REPUBLIC OF LITHUANIA
IMPLEMENTING THE AGREEMENT
BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE EUROPEAN UNION
ON
THE READMISSION OF PERSONS RESIDING WITHOUT AUTHORISATION**

The Republic of Armenia and the Republic of Lithuania, hereinafter referred to as the Contracting Parties,

Wishing to ensure the implementation of the Agreement between the Republic of Armenia and the European Union on the readmission of persons residing without authorisation done at Brussels on 19 April 2013 (hereinafter referred to as the Agreement);

Pursuant to the provisions of Article 20 of the Agreement,

HAVE AGREED AS FOLLOWS:

**Article 1
Competent Authorities**

1. Pursuant to the provisions of Article 20(1)(a) of the Agreement, the following competent authorities of the Contracting Parties shall bear responsibility for the implementation of the Agreement:

In the Republic of Armenia:

Receipt, submission and handling of readmission and transit applications:

Migration Service

under the Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia 31/3 K. Ulnetsi, 0037 Yerevan

Tel: +37460 275 009 / +37460 275 017

Fax: +37460 275 033

E-mail: readmission@mta.gov.am

In the Republic of Lithuania:

a) Receipt, submission and handling of readmission applications:

Migration Department
under the Ministry of the Interior of the Republic of Lithuania
L. Sapiegos str. 1, LT-10312 Vilnius
Tel.: +370 5 271 7112
E-mail: info@migracija.gov.lt

b) Receipt, submission and handling of transit applications:

State Border Guard Service
under the Ministry of the Interior of the Republic of Lithuania
Savanorių av. 2, LT-03116 Vilnius
Tel.: +370 5 271 9305
Fax: +370 5 271 9306
E-mail: dvks@vsat.vrm.lt

2. The competent authorities of the Contracting Parties referred to in paragraph (1) of this Article shall immediately inform each other through diplomatic channels about any changes in the list of the competent authorities or in the information necessary for keeping in contact with the above-mentioned institutions.

Article 2

State Border Crossing Points

1. The readmission and admission in transit of citizens of the Contracting Parties and of third country nationals as well as stateless persons (hereinafter referred to as persons to be readmitted) shall take place at the following state border crossing points of the Contracting Parties:

In the Republic of Armenia:

Zvartnots International Airport
0042 Yerevan
Tel: +374 10 493 000
Fax: +374 10 493 000
E-mail: contacts@aia-zvartnots.aero

In the Republic of Lithuania:

State Enterprise Lithuanian Airports Vilnius Branch
Rodūnios kelias 2, LT02189 Vilnius, Lithuania
Tel.: +370 5 219 84 85, +370 655 00176
E-mail: vsat.vou.ob@vsat.vrm.lt

State Enterprise Lithuanian Airports Kaunas Branch
Oro uosto str. 4, Karmėlava, LT-54460 Kaunas district, Lithuania
Tel.: +370 37 399 319
E-mail: kauno.budetojas@vsat.vrm.lt

State Enterprise Lithuanian Airports Palanga Branch

Liepojos plentas 1, LT-00169 Palanga, Lithuania
Tel.: +370 46 053 688
E-mail: ws72105@vsat.vrm.lt

2. The competent authorities of the Contracting Parties shall immediately inform each other through diplomatic channels of any changes in the list of the state border crossing points provided in paragraph (1) of this Article.

Article 3

Means of communication

1. Readmission and transit application shall be submitted via the Readmission Case Management Electronic System (hereinafter referred to as "RCMES").
2. Replies to readmission and transit application and other related communication shall be submitted via RCMES.
3. Where necessary, readmission and transit applications and their replies may be submitted by other means of electronic communication (mail, fax or secured e-mail).

Article 4

Documents to be Submitted with an Application for Readmission

1. A standard readmission application form, attached as Annex 5 to the Agreement (hereinafter referred to as "a Readmission Application"), shall be completed in accordance with Article 8 thereof and shall be sent to the competent authority of the Requested Contracting Party via RCMES, or, where necessary, by other means of electronic communication together with supplementary documents listed in paragraph (2) of this Article. In case the necessity of interviewing a person to be readmitted is indicated in a Readmission Application in accordance with Article 4 (1) of this Protocol, it shall be sent at the same time to the diplomatic representation of the Requested State.
2. Apart from a Readmission Application, if possible, in every case the competent authority of the Requesting Contracting Party shall submit to the competent authority of the Requested Contracting Party the documents listed in Annexes 1-4 to the Agreement, a completed standard form "European Fingerprints' Standard" with fingerprints and a photograph of the person with regard to which a Readmission Application is submitted (not a scanned or otherwise made copy of the photograph). If the evidence provided for in Annexes 2-4 to the Agreement is to be submitted, it must be clear and accurate in order to enable its verification which would lead to determination whether the readmission obligation of the Requested Contracting Party exists.

Article 5

Interviews

1. If the competent authority of the Requesting Contracting Party, apart from a Readmission Application, cannot submit any documents listed in Annexes 1-2 to the Agreement or if the documents submitted are insufficient and if the necessity of interviewing a person to be readmitted is indicated in a Readmission Application, the competent authority of the Requested Contracting Party which examines a Readmission Application shall organise an interview of a

person to be readmitted according to the procedure provided for in this Article.

2. A person to be readmitted shall be interviewed by:

On behalf of the Republic of Armenia: officials of the diplomatic representation of the Republic of Armenia in the Republic of Lithuania.

On behalf of the Republic of Lithuania: officials of the diplomatic representation of the Republic of Lithuania in the Republic of Armenia.

3. An interview of a person to be readmitted must be organised no later than within 5 (five) working days as of the date of receipt of a Readmission Application which includes an interview request. The Requesting Contracting Party shall ensure bringing of a person to be readmitted to the diplomatic mission or consular post of the Requested Contracting Party. Upon agreement between the Contracting Parties, an interview can be held outside a building of the diplomatic mission or consular post and in such case, the costs related to holding of an interview (travel) shall be covered by the Requesting Contracting Party. The reply to a Readmission Application, which includes the results of an interview of a person to be readmitted, shall be submitted to the competent authority of the Requesting Contracting Party as soon as possible but no later than within the term provided for in Article 11(2) of the Agreement.

4. The term for responding to a Readmission Application provided for in paragraph (3) of this Article shall be calculated as of the date of receipt of a Readmission Application by the competent authority of the Requested Contracting Party.

5. If a person to be readmitted fails to arrive to the interview at a set time, and the Requested Contracting Party does not receive any information from the Requesting Contracting Party regarding a request to change the interview time of a person to be readmitted, and there is no other evidence necessary for the processing of the readmission, the Requested Contracting Party shall submit a written negative reply to the Readmission Application. In such cases, the Requesting Contracting Party, wishing to readmit the same person, must re-submit an application to the Requested Contracting Party.

Article 6

Documents to be Submitted at the Time of Transfer of a Person to be Readmitted

1. Following the approval by the Requested Contracting Party of a Readmission Application, the Requesting Contracting Party shall send a written notice to the Requested Contracting Party, which will contain the details of a person to be readmitted and the information concerning the transfer of such a person, attaching a copy of the consent of the Requested Contracting Party to take over a person to be readmitted.

2. The notice indicated in paragraph (1) of this Article shall be submitted by completing a Transfer Form, attached as Annex 1 to this Protocol (hereinafter referred to as "a Transfer Form"). A Transfer Form shall be submitted via RCMES, or, where necessary, by other means of electronic communication to the competent authority of the Requested Contracting Party not later than 3 (three) working days before the date of transfer of a person to be readmitted.

3. If the date of transfer of a person to be readmitted (hereinafter referred to as "Transfer Date") is postponed by the Requesting Contracting Party, because of legal or practical obstacles, the

competent authority of the Requesting Contracting Party shall immediately inform the competent authority of the Requested Contracting Party to which a Readmission Application is submitted, about the postponement.

4. In the case of a postponement as referred to in paragraph (3) of this Article, the competent authority of the Requesting Contracting Party shall update a Transfer Form in line with the provisions of paragraph (2) of this Article.

5. If the Transfer Date is postponed because of legal or practical obstacles of the Requested Contracting Party, the competent authority of the Requested Contracting Party shall immediately inform the competent authority of the Requesting Contracting Party about the postponement and propose a new Transfer Date.

Article 7 Transit Request

1. In addition to the provisions of Article 15(1) of the Agreement, if need be, a Transit Request must contain the following:

- a) Information on special needs related to nursing care or care for the elderly of a person in transit because of illness or age of such a person;
- b) Information on a possible need for security or protection measures with regard to a person in transit and/or escort personnel accompanying him/her.

2. The information mentioned in paragraph (1) of this Article shall be filled in the section C ("Remarks") of a Joint Transit Request Form provided in Annex 6 to the Agreement (hereinafter referred to as "a Transit Request Form").

3. Pursuant to Articles 14 and 15 of the Agreement:

- 1) A Transit Request must be submitted to the competent authority of the Requested Contracting Party via RCMES, or, where necessary, by other means of electronic communication no later than 15 (fifteen) days prior to the planned transit;
- 2) The competent authority of the Requested Contracting Party shall reply to a Transit Request via RCMES, or, where necessary, by other means of electronic communication within the term prescribed in Article 15(2) of the Agreement. The competent authority of the Requested Contracting Party shall also indicate if it agrees with the transit, the date, the designated state border crossing point of the Requested Contracting Party, transportation mode and members of the accompanying escort;
- 3) If the Requesting Contracting Party deems assistance of the Requested Contracting Party as a necessary step, this must be indicated in a Transit Request Form. The competent authority of the Requested Contracting Party shall then confirm whether or not it can provide assistance requested by the Requesting Contracting Party;
- 4) In the event of escorted travel by air, the competent authority of the Requested Contracting Party shall secure and provide assistance for the boarding of a person who is a subject of transit, to the greatest extent possible. In such a case the escort

personnel of the Requesting Contracting Party should also be present.

4. The Requesting Contracting Party shall accept back to its territory, without any delay, a person who is a subject of transit as referred to in Article 14(4) of the Agreement if:

- 1) Approval for transit has been denied or withdrawn as referred to in Article 14(3) of the Agreement, or
- 2) A person who is a subject of transit has illegally entered the territory of the Requested Contracting Party, or
- 3) Approval for transit or readmission has been denied by another transit country or the final destination country, or
- 4) Transit cannot be approved based on other circumstances.

Article 8 **Escorted Readmission and Transit**

Pursuant to Article 20(1)(b) of the Agreement, the Contracting Parties agree on the following provisions related to the escorted transfer or transit of a person to be readmitted through their territories:

- 1) Escort personnel shall be responsible for escorting persons to be readmitted and for their transfer to the representatives of the competent authorities of the destination country;
- 2) Escort personnel shall perform their duties unarmed and in plain clothes. Escort personnel must possess documents proving the approval of readmission or transit by the Requested Contracting Party. They shall also carry their official identification documents;
- 3) The Requested Contracting Party shall provide escort and assistance through the engagement of its personnel which is authorised to perform such tasks;
- 4) Escort shall be organised in accordance with the legislation in force of the Requested Contracting Party. During escort or transit operations, personnel's authorisation shall be limited to self-defence. In case of inability of the Requested Contracting Party to provide adequate assistance to the escort personnel of the Requesting Contracting Party, or in case there is a need to support the assisting personnel in obviously dangerous situations, the escort personnel is authorised to act in a reasonable and proportionate manner to prevent a person who is a subject of readmission or transit from escaping, hurting himself/herself or any other persons, or from damaging the property;
- 5) The escort personnel shall be responsible for carrying travel documents and any other documents related to a person who is a subject of readmission or transit, as well as for the delivery of these documents to a representative of the competent authority of the destination country;
- 6) The escort personnel is not allowed to leave the transfer location before the delivery of a person who is a subject of readmission or transit;

- 7) The competent authority of the Requesting Contracting Party shall provide valid visas for its escort personnel for all transit countries or the destination country, if necessary.

Article 9 Coverage of Costs

Costs related to readmission or transit operations incurred by the Requested Contracting Party, which shall be covered by the Requesting Contracting Party in accordance with Article 16 of the Agreement, shall be reimbursed by the Requesting Contracting Party in euros within 30 days from the date of receipt of the invoice.

Article 10 Experts' Consultations

The Contracting Parties shall agree to establish a bilateral experts' commission. The competent authorities of the Contracting Parties indicated in Article 1 of this Protocol shall appoint members of the commission and shall inform the competent authorities of the other Contracting Party thereof. Consultations about the implementation of this Protocol shall be organised as the need arises.

Article 11 Language of Communication

The language of communication and cooperation between the Contracting Parties as they conduct the procedures under the Agreement and this Protocol shall be English.

Article 12 Relationship with other Agreements

This Protocol shall not affect the rights, obligations and responsibilities of the Contracting Parties arising from other international agreements.

Article 13 Dispute Resolution

Disputes and disagreements, which may arise with regard to interpretation or application of the provisions of this Protocol, shall be solved by negotiations and/or mutual consultations.


Article 14 Entry into Force, Duration and Termination of the Protocol

1. The Contracting Parties shall inform each other through diplomatic channels of the completion of the internal procedures, necessary for the entry into force of this Protocol. The Contracting Party, following the receipt of the last notification, shall notify, through diplomatic channels, the Joint Readmission Committee referred to in Article 19 of the Agreement about such receipt. This Protocol shall enter into force on the first day of the month following the date of receipt of such notification by the Joint Readmission Committee.

2. If the Agreement becomes ineffective, this Protocol shall also become ineffective.
3. The Contracting Parties may by mutual agreement amend provisions of this Protocol. Amendments shall be done as separate protocols, which become an integral part of this Protocol and shall enter into force in accordance with the procedure prescribed in paragraph (1) of this Article.
4. Each Contracting Party may terminate the Protocol by sending a written notice of termination through diplomatic channels to the other Contracting Party. This termination shall become effective on the first day of the month following the expiration of a period of 3 (three) months after the date of receipt of notice of termination.
5. As of the date of entry into force of this Protocol the Agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Lithuania on the Readmission of Persons with Unauthorised Stay, done at Yerevan on 15 September 2003, shall cease to have effect.

Done at Vilnius on 15 June 2021, in two original copies; in Armenian, Lithuanian and English, each text being equally authentic. In case of a dispute in the interpretation of the Protocol, the English version shall prevail.

FOR THE REPUBLIC OF ARMENIA



FOR THE REPUBLIC OF LITHUANIA



Annex I

**to the Protocol between the Republic of Armenia and
the Republic of Lithuania Implementing
the Agreement between the Republic of Armenia
and the European Union on the Readmission of
Persons Residing without Authorisation**

National coat of arms

Name of the competent authority of the Requesting Contracting Party

(Place and date)

Reference No

To

.....

.....

(Name of the competent authority of the Requested Contracting Party)

TRANSFER FORM

Pursuant to Articles 5 and 6 of the Protocol between the Republic of Armenia and the Republic of Lithuania implementing the Agreement between the Republic of Armenia and the European Union on the Readmission of Persons Residing without Authorisation

INFORMATION ABOUT THE PERSON AND THE PROCEDURE OF TRANSPORT

1. Full name (please underline the surname)

.....

2. Date of birth

.....

3. Travel document (please specify the type)

.....

No..... valid from..... until..... (year)

4. Means of transportation (by air)

.....

5. Date

.....

6. Time

.....

7. Place of transfer (border crossing)

.....

8. Health condition of the person to be readmitted

.....

9. Escorted transportation Yes No

 If yes, please specify the details about the escorting personnel

.....

.....

10. Security measures to be taken at the place of transfer

.....

.....

(Signature of the competent authority of the Requesting Contracting Party)

(Seal/stamp)

Annex II

**to the Protocol between the Republic of Armenia and
the Republic of Lithuania Implementing
the Agreement between the Republic of Armenia
and the European Union on the Readmission of
Persons Residing without Authorisation**

**Non-Working National Holidays and commemoration days of the Republic of Armenia
(pursuant to the Law "On holidays and commemoration days of the Republic of
Armenia")**

1. National holidays and commemorations days:

- a) 31 December – 6 January – New Year's Days and Christmas
- b) 7 January –/ The day of commemoration of the dead, following Christmas and Epiphany
- c) 28 January – Army Day
- d) 8 March – Women's Day
- e) 24 April – Armenian Genocide Victims Remembrance Day
- f) 1 May – Labour Day
- g) 9 May – Victory and Peace Day
- h) 28 May – Republic Day
- i) 5 July – Constitution Day
- j) 21 September – Independence Day

**National Holidays of the Republic of Lithuania
(pursuant to the Labour Code of the Republic of Lithuania)**

2. National holidays:

- a) 1 January – New Year's Day
- b) 16 February – Independence Day
- c) 11 March – Restoration of Independence
- d) Sunday and the following Monday of the Christian Easter (according to western traditions)
- e) 1 May – International Labour Day
- f) First Sunday of May – Mother's Day
- g) First Sunday of June – Father's Day
- h) 24 June – Saint John's Day

- i) 6 July – the National Day of the Coronation of Mindaugas, King of Lithuania
- j) 15 August – Assumption Day
- k) 1 November – All Saint's Day
- l) 2 November – All Souls Day
- m) 24 December – Christmas Eve
- n) 25–26 December – Christmas

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021 թվականի հունիսի 15-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պաշտոնակատար**



Վահագն Փիլիպոսյան